



“ԹՈՂ ՏՈՒԻՒ ՄԱՆԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ՂՈՒԿ ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1906

ԹԻՒ 5

ՄԱՔՈՒՑՍ ԲԼՈՒՐԸ

Կարմիր ծովուն արևելեան կողմը, այն գաւառին մէջ ուր ժամանակաւ Մովսէսի երկիրն էր, այս բլուրը կը բարձրանայ, խորունկ ձորերով շրջապատուած է, որոնք այդ տեղին բնական մեծ ամրութիւն մը կու տան. և մեր Տէրով ժամանակը անոր գաւառի վրայ կը կանգնէր բերդ մը որու հիմերը միայն մնացած են հիմա Յովսէպոս կը պատմէ թէ այս բերդին

Յովհաննու փափաքածն ալ այս էր. Անիկա իր ազնիւ անանձնատիրութեամբ միշտ յայտարարած էր թէ ինք չէր Մեսիան, բայց թէ իր ետեւէն կու գայ մէկը որուն կոչիկները վերցնելու արժանի չէ ինք: Երբ Յովհաննու մեծ և բարի գործը լմնցաւ, անիկա արժանի էր հանրութենէն պատուի և հանգիստ ու յաջող կեանք վայելելու: Բայց Աստուած այսպէս տնօրինած չէր իր ծառային համար:

ԱՐԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Ամերիկուհի մը որ առեն մը ուսուցիչ էր Թոքիոյի աղնուական ընտանիքներու յատուկ աղջկանց դպրոցի մը մէջ, կըսէ թէ ինչպէս իր աշակերտուհիներէն մէկը իր ցաւը յայտնեց քաղցր վարմունքի մէջ պակաս գրանուելուն համար: Դպրոցին աղջիկները գրական ընկերութիւն մը կազմուեցան. և ամսօրեայ ժողովներուն մէջ իրենց ճառերու ընթերցումը Անգլիերէն, Չինարէն և Ճափոնեան լեզուներով կ'ըլլար: Կանոնաւոր ժողովներէն մէկուն մէջ զիտուեցաւ թէ աղջիկներէն մէկը որ այդ կրթութեան մէջ մաս պիտի ունենար, անսովոր կերպով կարմրած և յուզուած դէմք մը կը ցուցնէր: Վերջապէս երբ իր կարգը եկաւ, կը գրէ անոր վարժուհին, ելաւ և սկսաւ կարդալ բան մը զոր քերթուած (բանաստեղծութիւն) կարծեցի անոր յանգաւոր ըլլալէն: Մինչ կը կարդար, ունկնդիրներուն գէմքերը հետզհետէ աւելի լուրջ երևոյթ մը կ'առնէին, կարդացողին ձայնը սկսաւ դողդաղ և ընդհատուիլ, և ունկնդիրները իրենց գլուխները մէկիկ մէկիկ վար ձռեցին և թաշկիւնակները աչքերնուն բռնեցին: Կարդացողը երկու երեք անգամ ստիպուեցաւ բոլորովին կանգ առնել, բայց ամէն անգամուն ինքզինք կառավարեց և նորէն շարունակեց: Երբ աղջիկը լմնցուց ընթերցումը և տեղը նստաւ, սրահին մէջ գտնուած իւրաքանչիւր աղջիկ և ճափոնցի վարժուհի կու լային, ոչ թէ հանդարտօրէն և սովորական կերպով, այլ յուզուած, իբր թէ մեծ վշտի մը առաջին ագրեցութեան ներքեւ, մինչ կարդացող աղջիկն ինք կը հեկեկար սիրտը պատուելու աստիճան:

Հարկաւ, քանի որ ես չէի հասկնար



մէջ էր որ Յովհաննէս Մկրտիչ գըլխատուեցաւ: Կարապետին հրապարակային գործը լմնցաւ երբ անիկա Մեսիայի գալուն պատրաստած էր ժողովուրդը ապաշխարութեան մկրտութիւնով, երբ նոյն ինքն ֆրիստուսը մկրտեց և լսեց երկինքէն եկած ձայնը, «Անիկա է իմ սիրելի Որդիս:» և ցուցուց ֆրիստուսը իր հետևողներուն, ըսելով, «Ահա Աստուծոյ Գառը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ:» Այդ ժամանակէն ժողովրդին աչքերը դառնալու էին ոչ թէ Յովհաննէսի, այլ ֆրիստուսի:

Յովհաննէս Մկրտչի վերջին օրերը տխուր բանախ մը մէջ անցան: Այս աշխարհին մէջ չէր որ Յովհաննէս և անոր մեծագոյն վարդապետը պիտի ընդունէին իրենց բարի վարձքը: Մաքիսս բլուրէն ոչ հեռու, տաք ծծմբային աղբիւրներ կան որոնք դարերէ ի վեր համբաւաւոր եղած են. Անոնց շուրին տաքութիւնը եռացման կէտին մօտ է, և շոգիի ամպեր կը բարձրանան անոնցմէ: Մեծն Հերովդէս հոս եկած է իր ախտերուն դարման գտնելու համար, և մինչև այսօր հոս մարդիկ կու գան այդ նպատակով:

— 300 —

այս քերթուածը, շատ հետաքրքրուեցայ գիտնալ թէ ի՞նչ էր այն ցաւալի բանը որ այսօրան վիշտ արժարծեց: Հասկցուեցաւ թէ ձմեռուան սկիզբները այս աղջիկը կորսնցուցած էր ւ մենասիրելի մեծ մայրը որ իր շամէն բանն էր, ոչ միայն մեծ մայր, այլ թէ՛ մայր թէ՛ բարեկամ: Աղջիկը իր մեծ մօր մահէն ի վեր շատ անհանգիստ եղած էր մտածելով թէ շատ անդամ դեգ և անհնազանդ գտնուած էր անոր հանդէպ, և չէր փոխարինած իր մեծ մօր իրեն շուայլած սիրոյն և խնամքին դէմ: Այս մտածութիւնը խռովեցուցած էր զինք, այնպէս որ միտքը դրած էր ապաշխարանք մը քայել խոստովանելով իր բոլոր յանցանքները աշակերտակիցներուն բազմութեան առջև և յորդորել զանոնք որ զգուշանան իր սխալը և յանցանքը գործելէ և միշտ քաղցր և փափկանկատ ըլլան իրենց սիրելիներուն, վասն զի շուտով կու գայ ժամանակ, երբ բնաւ չեն կրնար փոխարէն հատուցանել իրենց անզոյշ խօսքերուն կամ անհնազանդութեան:

Աղջիկը զայլ ըրաւ, գրելով իր խոստովանութիւնը Ձինարէն դասական ոճով, զոր սրբագրել տուած էր Ձինացի ուսուցչին, և յետոյ զանիկա աղջիկներուն կարդալով, որուն արդիւնքը նկարագրուեցաւ վերը:

«ԵՍ ԺԱՄԱՆԱԿ ՄԸ ՀՈՆ ԷՒ»


Լարախաղացներու (ճանպաղ) խումբ մը խաղեր կը ներկայացնէր Ամերիկեան Պրումզպէրի քաղաքին կողմնական մէկ փողոցին մէջ: Անոնց մէջ կար պզտիկ մը որ տեսնողը կը կարծէր թէ աղէկ վարմունք չէր տեսներ իր ընկերներէն: Խաղին գաղարման միջոցին հանդիսատեսներէն մէկը հանդարտութեամբ այդ պզտիկին ձեռքին մէջ դրաւ արծաթ ստակ մը մէկ երկու խրախուսիչ խօսքերով: Տղան եռանդուն «Նորհակալ եմ, տէր», ըսելէն ետքը իսկոյն աներևութացաւ: Մարդը հետաքրքրուելով թէ տղան ինչի՞ պիտի ծախսէր իր ընդունած այդ ստակը, անոր հետեւեցաւ: Գիւրին չէր աչքի առջև պահել տղան, որ կրցածին չափ արագ կը վազէր, մինչև որ եկաւ Պրէյթ Օրմընտ փողոց, խանութներուն քովէն անցնելով: Չկայնեցաւ մինչև որ հասաւ Մանկանց Հիւանդանոցին գանձանակին առջև, և իր ստքերուն մատերուն վրայ կայնած անգամ մը նայեցաւ արծաթ ստակին և զանիկա գանձանակին մէջ

ձգեց: Մարդը շատ զարմացաւ և տղուն քով վազելով, ինչու այդպէս ըրիր ըսաւ: «Ինչ ժամանակ մը հոն էի, և անոնք շատ սէր ցուցին ինձի»: պատասխանեց տղան:

ԳԻՄՆԱԶՈՒՆՆԵՐ

Այս պատկերը կը ցուցնէ ի փոսիղ երիտասարդաց Գրիտտոնէական ընկերակցութեան չէնքին Գրիմազիոնրի երբ այս ընկերակցութիւնը սկսաւ, նպատակը բարոյովին հոգևոր էր: Աղջիկի և Աստուածաշնչի ուսման համար ժողովներ կ'ունենար, և ասոնք մինչև հիմա սակաւին անոր ամէնէն կարևոր

մասնաւորապէս անոնց՝ որոնց ցերեկները կ'անցնին ուսման պարապումով կամ ուէ նստողական գործով: Հոռմէական առած մըն է, «Առողջ միտք առողջ մարմնի մէջ»: Եւ Պօզոս առաքեալ նոյն զաղափարը կը հաստատէ երբ մեզ կը յորդորէ փառաւորել զԱստուած մեր մարմիններուն և հոգիներուն մէջ: Մենք կը փառաւորենք զԱստուած երբ մեր հոգին ու մարմինը զօրաւոր և մաքուր կը պահենք: Միշտ հաճելի է դիտել լաւ մարմնամարզներ եթէ խաղերը վտանգաւոր տեսակէ չըլլան:



զբաղումներն են: Բայց ընկերակցութիւնը երիտասարդները գրաւելու և զանոնք անբարոյականութեան և սրկայութեան կեանքէ ազատելու համար պէտք տեսաւ ուրիշ միջոց մըն ալ գործածել: Գինետունները շատ անգամ երաժշտութիւն, գնդամուշ (պիլարտո) և ուրիշ բաներ կ'ունենային հրապուրելու և իրենց քաջելու համար երիտասարդները, որոնք իրիկունները իրենց օրական գործերէն ետքը կ'ուզէին մէկտեղ գալ և զբօսանքի տեղեր գտնել: Երիտասարդները այսպիսի փորձութիւններէ ազատելու համար ընկերակցութիւնը բացաւ գիմնազիոններ, ընթերցարան սրահներ և անմեղ զուարճութեանց տեղեր:

Բայց միայն իրրև զբօսարան չէ որ գիմնազիոնները պատուական ծառայութիւն կը մատուցանեն. անոնք նաև կ'օգնեն առողջութիւն զարգացնելու,

ՈՐ ԿՈՂՄ ԿԸ ՀԱԿԻՍ

«Երբ ծառ մը դէպի հարաւ կամ դէպի հիւսիս ինչայ, այն ծառը ինչ կամ տեղը կը մնայ»: Ժող. ԺԱ. 3:

Ծառը ոչ միայն կը պառկի երբ կ'իյնայ, այլ նաև կ'իյնայ այն կողմը որու կը հակի: Այսինքն մենք կ'երթանք մեր հակումներուն կողմը: Այնպէս չէ: Մեր միտքին հակումը ամէն բանի մէջ ամէն բան է մեզի համար: Գասն տարի առաջ իմ կիրակնօրեայ դպրոցի դասիս մէջ երկու տղաք կային, փայլուն, աշխոյժ տղաք, ուրոնք շատ գրաւած էին ուշադրութիւնս, միայն անոնցմէ մէկը երբեմն ինձի նեղութեան պատճառ կ'ըլլար: Ծատ անգամ իրիկունները զանիկա քաղաքի տղոց հետ ընկերացած կը տեսնէի: Երբ հարցնէի թէ ինչու այդպէս բացակայ կը գտնուէր, սովորաբար կ'ըսէր թէ տեղ կը զրկուէր և


այդ էր պատճառը, թէ չէր կրնար արգելել տղաքը երբ խօսէին իրեն հետ: Թերեւս շտակ էր բաժնը, բայց ես տակաւին հոգ կ'ընէի և անհանգիստ կ'ըլլայի: Անգամ մը ըսի անոր մօրը. «Աչտ գիշերները շատ դուրս կ'ելլէ»: «Աչտ գիշերները դուրս ելլէ՞: Ո՛հ, ոչ: Աչտ գիշերները դուրս չելլեր»: «Ուրեմն ես սխալա՞ծ եմ», ըսի:

Միւս տղան, որուն անունը Արշակ էր, երբեք չտեսայ փողոցի տղոց հետ: Վստահ եմ թէ իրիկունները իրենց տան մէջ կ'անցընէր: Ես միշտ զանկա կա կը տեսնէի որ իր դասերը կը սորվէր, և կա՛մ կը կարդար իր քոյրերուն հետ, կա՛մ ինքնիրեն կը խաղար:

Քսան տարի առաջուան պատմութիւն է այս: Երկու տղաքն ալ սկսած էին այն ատեն ցուցնել թէ ո՛ր ճամբուն կը հակէին, և անոնց ճաշակները ինչի՛ կը տանէին զանոնք: Քսան տարիները ատիկա աւելի պարզ կերպով պիտի ցուցնէին: Անցեալ օր լսեցի Աչտի վրայով Մէկը անոր պատահեր էր: «Ինչպէս է», հարցուցի: «Իրաւ որ անպիտան մըն է, եթէ աւելի գէշ չէ: Աղտոտ, ծոլ, խման մէկը, զոր ոչ մէկը կ'ուզէ իր գործին մէջ առնել», պատասխանեց մարդը: «Ո՛հ, շատ կը ցաւիմ ատոր համար: Կը ցաւիմ բայց չեմ զարմանար: Արդեօք ո՛ր է Արշակ»: «Արշակ, Չէ՛ք գիտեր որ անիկա բաժանորդ առնուեցաւ այն հին ընկերութեան մէջ ուր կ'աշխատէր: Ընկերութիւնը չէր կրնար թողուլ զանիկա, ուստի իր մէջ առաւ»: «Աղէկ, աղէկ, ճիշդ այդ էր որու կ'ակնկալէի: Տղայութեան ատենը շտակ կողմը հակեցաւ անիկա»:

(ըխտափոտ) նման ապառաժին կը փակչի ծծելով, և մեծ ոյժ պէտք է զանիկա փակած տեղէն բաժնելու համար: Մենք կը խօսինք առիւծին և ձիուն ոյժին վրայ, բայց աւելի մանր կենդանիներն են որոնք ամէնէն աւելի մեծ ոյժ ունին համեմատաբար: Լուս իր բարձրութեան 300 անգամը բարձր կրնայ ցատկել, և իր ծանրութեան գրեթէ 1,500 անգամը ծանրութիւն ունեցող բեռ կրնայ քաշել: Եւ հոս ցուցուածին շատ մանր խեցեմարմններ կան, զորոնք փրցնելու համար այն ժայռէն որու փակած են, իրենց ծանրութեան գրեթէ 2,000 անգամը ոյժ պէտք է:

Հոս ցուցուած խեցիին գիտական անունն է փլէնթոմարիա Ատանզոնիանա: Թելադրուած է թէ երբ մարդ մը կիրք կ'ելլէ և կ'ուզէ բարկացոտ խօսքեր զրուցել, աղէկ է որ այս խե-



ցիին անունը քանի մը անգամ կրկնէ, փորձեցէք:

ՆՈՒԱՐԳԻ ՀԱՁԸ

Ես օր մը Նուարգի տունը կը գըտնուէի, կ'ըսէ տիկին մը, և ահա անիկա ստկալի պաղ մը առած էր: Կը հազար, կը հազար, կը հազար իբր թէ իր թոքերը կտոր կտոր պիտի ըլլային: Նստայ անոր քով և հետը խօսեցայ: Ըսի թէ ո՛րչափ անձեր տեսած եմ որոնք այնպէս սաստիկ կը հազային որ իրենց թոքերը տկարացան և ցաւեցան, և վերջապէս հիւժախտ ունեցան, դեղնեցան և նստան բարձրու մէջ գամուած: Հիւանդ եղան ու չէին կրնար գործել կամ քայլել կամ ուրիշներու բարիք ընել ունէ կերպով, հապա իրենց կը մնար սպասել և չարարուիլ ու մեռնիլ: Ըսի թէ ո՛րչափ կը ցաւիմ իրեն ասանկ

վտանգաւոր ճամբու մը մէջ գտնուելուն համար: Վասն զի չէի ուզեր որ ինք հիւանդանայ ու մեռնի ուրիշներու պէս: Այնուհետեւ աշխատեցայ հասկնալ թէ ինչէ՛ն պաղ առած էր, սապէս. «Դուն բարակ կօշիկներ կը հագնիս»: «Ո՛չ, իմ կօշիկներս թանձր են: Հայրս կօշիկներուս ներբանները (թապան) թանձր չինել կու տայ»: «Ոտքերդ պաղ են, կը մտնի»: «Ո՛չ, ոտքերս չեն մտնի»: «Աղէկ, ոտքերդ ո՞ւ՞ են»: «Ո՛չ, ոտքերս ու՞ չեն»: «Ես ալ այդպէս կարծեցի: Ոտքերդ պաղ չեն, այսինքն ցուրտէն չեն ներուիր, բայց ու՞ ալ չեն: Հիմա քու արիւնդ միշտ կ'անցնի այդ պաղ ոտքերուդ մէջէն: Եւ եթէ ոտքերդ այսպէս պաղ են, արիւնդ պիտի պաղի անոնց մէջէն անցած ատեն, և այսպէս պաղ պիտի առնես: Աւելի աղէկ կ'ընես եթէ կէս դոլլ տաք ջուր առնես, ոտքերդ անոր մէջ դնես երբ առաւօտուն կ'ելլես, և զլուխդ քիչ մը թրջես զաղջ ջուրով այնուհետեւ քովդ աման մը տաք ջուր ունենաս և քանի մը վայրկեանն անգամ մը անկէ քիչ մը աւելցնես քու տաք ջուրիդ, այնպէս որ զանիկա այնչափ տաք պահես որչափ կարենաս դիմանալ: Ոտքերդ տաք ջուրին մէջ պահէ տաք սառնորհինգ վայրկեան, յետոյ չորցուր և գուլպայ հագիր ու ոտքերդ գործածէ: Ասիկա ըրէ շաբաթը երեք անգամ, և կը յուսամ թէ ոտքերդ պիտի տաքնան»:

«Չուխայէ քանի՞ հանդերձ կը հագնիս քու կոնակիրդ և ուսերուդ վրայ»: «Նայիմ, մէկ, երկու, երեք, չորս, հինգ, Ես չուխայէ հինգ հանդերձ կը հագնիմ»: «Դուն ու՞ թանձրութեամբ չուխայէ հինգ հանդերձ կը հագնիս: «Հայրդ քանի՞ հատ կը հագնի»: «Հայրը մտածեց վայրկեան մը և ըսաւ, «Ութ, և երբ ցուրտ տեղ մտնեմ, վերարկու մըն ալ կը հագնիմ վրայէն»: «Տես, խեղճ, տկար աղջիկ, դուն բարակ չուխայէ հինգ հանդերձ կը հագնիս, մինչ քու հայրդ ութ տասը հանդերձ՝ քու հանդերձներէդ շատ թանձր չուխայէ: Կը խորհիս թէ դուն քու հօրմէդ աւելի զօրաւոր և պինդ կազմուածք ունիս»: «Ո՛չ, ես չեմ խորհիր թէ ես իմ հօրմէս աւելի զօրաւոր կամ աւելի աւուղ եմ»: «Եւ սակայն եթէ հայրդ քու հանդերձներուդ պէս հանդերձ հագնի, պաղ կ'առնէ և կը հիւանդանայ: Նսա, գիտե՛ս թէ քու թոքերդ մարմնիդ մակերեսին ալ մէնէն

ԾԱՆՈԱԳԻՆ ԽԵՑԻ ՄԸ

Հոս կայ խեցի մը որու համար Լոնտոնի բնական պատմութեան թանգարանը 55 Անգլ. օսկի վճարած է: Գեղեցիկ է ձևով և գոյնով և խոշոր է: Այս տեսակ խեցիներ շատ հազուագիւտ են: Կ'ըսուի թէ այսպիսի խեցիներ 14 հատ միայն տեսնուած են: Խեցիին բարձրութիւնն է վեց մասնաչափ, և վարի կողմին տրամագիծը իբր նոյնչափ է: Գրեթէ մի գոյն ունի բայց կարմիր և նարնջագոյն նշաններ ալ կան անոր վրայ: Բնավայրն է խորունկ ծովերուն մէջ, և խղունչի նման կենդանին որ անոր մէջ կը բնակի, մկանական մեծ ոյժ ունի: Օրթոփունսի

աւելի մօտ են ճիշդ ուսիդ ոսկորին ներքև: Եթէ ուսիդ ոսկորին ներքևէն մտի բարակ շերտ մը հանեմ, ճիշդ թոքերուդ կը հասնիմ: Եթէ մագերդ ուսերուդ և կռնակիդ վրայ իյնան, քեզ բաւական կը պահպանեն: Բայց բանը այդպէս չէ, և ուստի օգը կռնակիդ կու գայ քու ուսերուդ մէջտեղէն, և ցուրտը թոքերուդ կ'երթայ ուղղակի:» «Ես գիտեմ որ շատ անգամ ցուրտ կը զգամ ուղղակի ուսերուս մէջտեղը:» «Այո, և ցուրտը ներս կը մտնէ և թոքերուդ կը հասնի: Դուն պէտք է որ ամէնէն տաքուկ հանդերձը հազնիս ճիշդ ուսերուդ և կռնակիդ վրայ: Բայց հոն, ուրկէ յաճախ պաղ կ'առնես, բարակ շտապէ միայն հինգ հանդերձ կը հագնիս, մինչ մէջքէդ վար, ուրկէ բնապաղ չես առներ, քան երեսուն շտապէ հանդերձ կը հագնիս, ծալքերը, և փութերը ևն: հաշուելով:

«Ուրեմն, Նուարդ, տեսար հիմա թէ հազը ինչէն եկաւ: Հիմա ըսեմ նաև ինչպէս պիտի ազատուիս անկէ: Պէտք է որ ստքերդ տաք պահես, և հանդերձներուդ այն մասերը որոնք ստքերուդ ու թեւերուդ վրայ կու գան, պէտք է որ թանձր ըլլան, պէտք է որ երեք անկիւնով երկու հատ բաւական մեծ շտապի թանձր կտորներ ունենաս, որոնք ծածկեն ուսերդ և կռնակդ, և վար իջնես մինչև մէջքդ: Յետոյ զանոնք իրար կարէ և անոնք մէջտեղ լաւ թանձր բամբակ դիր Ս.յոս. հետև զանկա կարէ հանդերձիդ ներսի կողմը և հազիր ամէն ժամանակ, Հիմա, Նուարդ, ես կ'ուզեմ որ մտիկ ընես ինձի և ի գործ դնես ըսածս, վասն զի կ'ուզեմ որ դուն առողջ և զօրաւոր ըլլաս և աշխարհի շատ մը բարիք ընես, զոր չես կրնար ընել եթէ պաղ առնես և հիւանդ ըլլաս ու հաղաս և մեռնիս: Այսպէս պիտի ընես, այնպէս չէ:»

Նուարդ խօսք տուաւ, և ինձ մէջնորհակալ եղաւ իրեն ըսածներուս համար: Մայրն ալ ըսաւ թէ հետևեալ օրը պիտի պատրաստէ կռնակին համար յանձնարարուած հանդերձը, և թէ վատահ է որ Նուարդ պիտի հազնի գայն, և ես մեկնեցայ անոնց քովէն: Երկու օր ետքը Նուարդը տեսայ, որ ըսաւ թէ այն հանդերձները հազնեղէն ի վեր շատ քիչ կը հազայ: Ասիկա քանըհինգ տարիներէ աւելի առաջ տեղի ունեցաւ: Զանկա տեսայ քանի մը օր առաջ, վասն զի կ'ապրի և առողջ է, և ունի

ազդիկներ որոնք իրեն այն ատենուան տարիքէն աւելի տարիք ունին, ինք մեռած չէ հիւժախտէ, այլ առողջ կին մըն է այսօր:

Ես խորհեցայ թէ կարելի է ուրիշներ ալ պէտք կ'ունենան զիտնալու թէ ինչ ընելու է ցուրտ օգի ատեն, և թէ որչափ աւելի աղէկ կ'ըլլայ եթէ կարենամ համոզել զանոնք տաք պահող հանդերձներ հազնիլ փոխաւնակ դեզեր առնելու, և այսպէս որոշեցի գրել այս ճշմարիտ պատմութիւնը: Խորհեցայ թէ այն ատեն անոնք առողջ պիտի ըլլան և զօրաւոր, և պիտի ծառայեն Տէրօջը և բարիք պիտի ընեն ու փրկուին: Այդ կ'ուզեմ որ դուք ըլլաք բարի և առողջ և զօրաւոր և երջանիկ, և ուստի կրնաք ձեր մարմինները ընծայել կենդանի զօն մը՝ սուրբ, Աստուծոյ հաճելի որ է մեր բանաւոր պաշտօնը:

«ՍՒՐՈՒՆՏ ԸՍԷ»

Ասկէ քիչ առաջ կին մը բազուկներուն մէջ ծրարներ բռնած՝ արտօնօք կ'անցնէր փողոցէ մը, ետևէն ալ փոքրիկ տղայ մը կը քայլէր: Կինը շատ յոգնած կ'երևէր և յայտնի էր թէ կեանքի դժուարութիւններ և նեղութիւններ կրած էր: Տղեկը յոգնած էր, և որովհետև արագ չէր քայլեր իր ետևէն, մայրը չեխեց զանկա և անոր ձեռքը ցնցեց մինչև որ պզտիկը սկսաւ սաստիկ լալ: Ճիշդ այդ ատեն փոքրիկ ազդիկ մը, որ երկու տարեկանէ աւելի չէր, կ'անցնէր իր պզտակի կողքով, և կ'երևէր թէ ամբողջ բանը հասկցած էր մէկ նոյալուածքով: Իր պայծառ երեսը տիրեցաւ, և իր կարգաւոր աչքերը փողոցին մէջի այդ բարկացած կիող վերցուց և ըսաւ թօթոթելով, «Սիրունս ըսէ: Սիրունս ըսէ:» «Ինչ կ'ըսէ այդ մանկիկը:» հարցուց կինը զարմանալով, երեսը կակուղցած՝ տեսնելով ազնիւ և սիրուն դէմքը մանկիկին որ այնքան փոքր է որ չէր սպասուեր թէ պիտի կրնար խօսիլ: «Այդ սիրունիկը ինձի կ'ըսէ», ըսաւ: «Այո», եղաւ պատասխանը: «Երբ տան մէջ բանէ մը կը նեղուի, վեր կը բարձրացնենք զինք և կ'ըսենք՝ Սիրունս պէպէք, և ինք ալ կ'ըսէ ձեզի որ դուք ալ ձեր սիրուն տղեկը կու չէք ատիկա:»

«Թերևս ատանկ ընել աւելի աղէկ կ'ըլլար», ըսաւ կինը կասկարմիր կարած, և իր ծրարները ամէնն ալ մէկ բազուկին վրայ առնելով վերցուց իր տղան փափկութեամբ միւս բազուկով,

և շատ մը անոր տրամութիւնը անցուց համարյր մը դնելով երեսին վրայ, յետոյ գրեթէ ակնածանքով մը նայեցաւ ժպտող մանկիկին վրայ, որ այսպէս փափկութեամբ յանդիմանած էր զինք, և իր ճամբան զնաց աւելի երջանիկ և աւելի բարի: Կնոջ տղան ալ անմիջապէս սփոփուեցաւ և իր մօր քովէն վազեց ուրախութեամբ շողկրատելով: Փոքրիկ ազդիկին դարմանը սրբուս լոյս բերաւ երկու տիրած սիրտերու:

ՄԱՐՏԻ ՀԱՆՆԵՆՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

ա	բ	ճ	Ա	շ	է	ւ
ա	բ	Է	Ս	Ն	ւ	ս
Է	Ն	Ս	Տ	Ն	ւ	ժ
Բ	Է	Թ	Ո	Ը	Ն	Յ
Է	Ղ	Է	Ի	Ն	Ն	յ
տ	ա	պ	Ա	ն	ա	կ
ծ	Է	ա	Ե	ա	ն	Է
ժ	ա	ժ	Ո	ն	ա	յ
հ	ա	գ	ա	բ		
կ	ի	ն				

Լուծեցին. Ռոմանով. Երուանդ Յ. Յուրուան՝ ճեան: Տեղուի: Եղիա Մարգարեան, Մանուկ Տեսպետեան, Խաչատուր Ս. Անտոնեան: Զմա՜րս. Գայիտ Ս. Փափազեան:

ՀԱՆՆԵՆՈՒԿԻ ՍՈՒՐԻ ԳԻՐԲԷՆ

.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.
.	.	0	.	.	.

4. Գետ մը որ Մեռեալ Կողմ կը թափի: 2. Յիսուսի մէկ տնտրուը: 3. Հայ տուն մը: 4. Գիշտակ թուրուս մը: 5. Բարեկէտ դաշտերէն մին: 6. Երուսաղէմի մօտ բլուր մը: 7. Հակայեց հին ազգ մը: 8. Բազար մը զոր Յուդայի ցեղը չիցաւ նուաճել: 9. Երբայական ամիս մը: 10. Վայրագ գաղամ մը: 11. Հայ տուն մը: 12. Յուդայի մէկ թագաւորը: 13. Արհեստաւոր մը, որու նմանցուած է Աստուած: 14. Անպատասխան մէջ խրոյեւացուց իջև անհերքն մէկը:
- Զրանքուն տեղը գրուող զերբը վերէն դէպ զար կը կարգացուն հռչակաւոր թագաւորի մը անունը:
- Թագաւոր ԽՈՐՈՎ ՍԱՐԸՅ
- Տարեկան բաժանորդագին 6 դահ. արծաթ կանիկ, ամեն տեղոյ համար:
- Ամբիկայի Միտհանարոց Ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ. Բ. ԿԻՐՆ Տնօրէն—Խմբագիր ձ. Ս. ՊԱՐՆԸՄ
- ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ԶԳՐԱՆՈՒ Ա. ՅԱՌՐ ՊԵՏԱԾՈՒՆ
Տիւնձանճըլար Եօզուլու: Ամբիկան Խան